Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Մեղրաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Մայրենի» (6 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (5 դասաժամ), «Ինֆորմատիկա» (4 դասաժամ), «Մաթեմատիկա» (4 դասաժամ) ուսումնական առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի Հ.596-ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում ՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025 թվականի նոյեմբերի 05-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին**, «Մեղրաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ամասիա, ·. Մեղրաշատ, 1 ÷áÕáó, 2-րդ փակուղի , օբյեկտ 2-րդ:

Տեղեկությունների համար զանգահարել **093763372** հեռախոսահամարով: